

ԱՐԵՎԿ ՉՊՊԱՆՅԱՆԸ ՎԱՅԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Վ Վ ԱՎԱԳՅԱՆ

Արշակ Չոպանյանի՝ 1920-ական թվականների հայ գրական մշակութային կյանքը արժևորող ուսումնասիրություններից է Վահան Տերյանին նվիրված հոդվածը, որը պատշաճ ուշադրության չի արժանացել հայ գրականագիտության մեջ: Ընդ որում, այն ամուռնել են ոչ միայն տերյանագետները, այլև մեծ գրականագետի քննադատական ժառանգությունը գնահատողները: Այսպես, Չոպանյանի՝ Տերյանի պոեզիայի վերաբերյալ արած արտահայտություններին մեկ կամ մի քանի նախադասությամբ թերևս միայն անդրադարձել է պոետի մասին արժեքավոր մեմագրության հեղինակ Վ. Պարտիզունին՝ հոդվածից մաս մեջբերումներ անելով, իսկ չոպանյանագետներից՝ միայն Կ. Դալլաքյանը, որն ավելի սակավախոս է, քան նախորդը: Իր «Արշակ Չոպանյան» մեմագրության մեջ, խոսելով Չոպանյանի՝ Խորհրդային Հայաստանի գրական-գեղարվեստական կյանքի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության մասին, Դալլաքյանը ընդամենը գրում է. «Նա (Ա. Չոպանյանը - Վ. Ա.) ընթերցողների ուշադրությունն է հրավիրում Պ. Մակինցյանի կողմից Պոլսում հրատարակված «Վահան Տերյանի երկերի ժողովածուի» վրա, հմտալից վերլուծությամբ քննարկելով Տերյանի ստեղծագործությունը»: Եվ միայն այսքանը. չկա նույնիսկ հոդվածի տպագրության տեղի և ժամանակի հիշատակումը:

Եթե չհաշվենք վերը հիշատակված հեղինակների մասնավոր դիտարկումները խընդրո առարկայի վերաբերյալ, ապա կարելի է ասել, որ գրականագիտությունը առ այսօր դեռ չի քննել Չոպանյան-Տերյան առնչության հարցը: Գուցե պատճառը նյութի սակավությունն է: Եթե բացառենք տարբեր տարիներին, զանազան պարբերականներում այլևայլ առիթներով Տերյանի վերաբերյալ Չոպանյանի ատյւթները, ապա կարելի է ասել, որ «Վահան Տերյանի «Երկերի ժողովածուն» խորագրով հոդվածը միակ ուսումնասիրությունն է, ուր հեղինակը բնութագրում ու արժևորում է քանաստեղծի քնարերգությունն ու արվեստը: Ծիշտ է, լրագրական այդ հոդվածում Չոպանյանը Տերյանի կյանքն ու գրական ժառանգությունը ներկայացնում է ընդհանուր գծերով, սակայն գրականագիտության պատմության մեջ քիչ չեն օրինակները, երբ անգամ ծավալով փոքր հոդվածներում առավել բնութագրական գնահատականներ են տրվել այս կամ այն գրողի այս կամ այն գործին: Հիշենք հենց նույն Չոպանյանի՝ վաղուց արդեն հայտնի հոդվածը Եղիշե Չարենցի մասին, որը, չնայած դարձյալ զրագրական» լինելուն, առ այսօր բանաստեղծի ստեղծագործության լավագույն գնահատումներից մեկն է, եթե չասենք նրա բանաստեղծական ժառանգության մի կարևոր հատվածի մեկնության ու գնահատման ելակետը¹: Անշուշտ, մենք չենք հավակնում Տերյանի մասին հոդվածին նույն նշանակությունն ու արժեքը տալ², սակայն, բոլոր դեպքերում, այն թեև համեստ, բայց հետաքրքիր մի էջն է Չոպանյան քննադատի ժառանգության և պետք է ուշադրության արժանանա:

¹ Կ. Դալլաքյան, Ա. Չոպանյան, Եր., 1987, էջ 403:

² Տե՛ս Էդ. Ջրբաշյան, Արշակ Չոպանյանի հոդվածը Եղիշե Չարենցի մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1977, № 3, էջ 135: Վ. Գաբրիելյան, Արշակ Չոպանյանը սովետահայ գրականության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1989, № 1, էջ 36-39:

* Մինչև Չոպանյանի հոդվածը քննադատությունն արդեն ճշգրտել ու հաղթահարել էր անագին թյուրիմացություններ Տերյանի պոեզիայի արվեստի մասին և տվել էր իր դրական գնահատականները: Հրապարակի վրա էին Արսեն Տերտերյանի, Սիմեոն Հակոբյանի մեմագրությունները, և ժամանակի մամուլում տպագրված մեծաքանակ հոդվածներ, որոնք բազմակողմանի քննությամբ հիմնականում լուծել էին բանաստեղծի գրական դավանանքի, անհատական խառնվածքից բխող յուրահատկության հարցերը, տվել նրա գրական վաստակի ընդհանուր բնութագիրը: Մինչևիտ

Հողվածը տպագրվել է 1923 թ. դեկտեմբերի վերջին Բոստոնում լույս տեսնող «Պայքար» թերթում¹: Նկատենք, որ մի փոքր ուշ՝ 1924 թ. մարտին, «Ապագայ» թերթում լույս տեսավ Չոպանյանի հայտնի հողվածը Եղիշե Չարենցի մասին: Ուրեմն կարելի է ասել, որ այդ երկու հողվածները մեր երկու մեծ բանաստեղծների մասին լույս տեսան գրեթե միաժամանակ: Մեր անդրադարձը հողվածների ժամանակագրության մանրամասներին ունի մեկ նպատակ. ցույց տալ, որ առանձին հարցադրումներ, գնահատման չափանիշներ, որոնք առկա են Չարենցին նվիրված ուսումնասիրության մեջ, երևան էին եկել դեռևս Տերյանի մասին հողվածում: Հեղինակի քննության սկզբունքների համանմանությունը հաստատում է, որ այդ հողվածները իրար սահմանակցվում են ոչ միայն ժամանակով, այլև նյութի վերլուծման իրենց տրամաբանությամբ:

Հիշենք, որ Չոպանյանը Տերյանի տաղանդի վերաբերյալ գրել էր դեռևս 1923-ի Դեկտեմբերին «Ապագայ» թերթում²: «Պ. Մակինցյանի նախաձեռնությամբ «Պետհրատի» կողմից Պոլսում «Պոլսյո շարք» ընդհանուր անունով բնութագրվող գրական գործերի հրատարակման մասին իր ծանուցման մեջ նա առանձնացնում է հատկապես վերջինիս կողմից Տերյանի ստեղծագործությունների լույսընծայումը և այդ կապակցությամբ խոսում բանաստեղծի մասին: «Քննադատը Տերյանին համարում է «իբր մեր ցեղի լուսազոյն բանաստեղծներէն» և «Հայոց ժամանակակից քերթութեան ամենէն հմայիչ, խորագգաց ու նրբարուեստ վարպետներէն մին, յղացման մէջ այնքան խորապէս ներշնչեալ որքան արտայայտութեան մէջ արուեստագէտ»: Չոպանյանը մի քանի նախադասությամբ հակիրճ ներկայացնում է գրողի ստեղծագործական ուղին և խոստանում հետագայում առանձին անդրադառնալ և վերլուծել նրա գործը: Իսկ դատելով «Պայքար»-ում տպագրված հողվածում արտահայտված նպատակներից՝ կարելի է ընդհանուր պատկերացում կազմել այն սկզբունքների մասին, որոնցով առաջնորդվելու էր Չոպանյանը իր ապագա ուսումնասիրությունը գրելիս. «Այս շատ հակիրճ քանի մը նօթերը Տերեանի գործին վրայ, ոչ վերլուծումն են անոր և ոչ բացատրութիւնը: Այդ աշխատանքը պիտի կատարեն ապագային, խոստանում է նա, - ջանալով՝ իմ հասկացած կերպով՝ որակել ու մեկնել Տերեանի տարօրինակէս ինքնուրոյն խառնուածքին բնորոշ գիծերը, ցույց տալ բազմադիմի ազդեցութիւնները որոնց տակ ան կազմուած ու զարգացած է և այն որոշ տեղը գոր այդ գերագօր քերթողը կը բռնէ հայ ու համամարդկային բանաստեղծութեան մէջ³»: Երևում է, թե որքան լայն ու ընդարձակ է եղել քննադատի ծրագիրը, որը, ցավոք, մնաց սուկ որպես մտահղացում:

Ինչպես «Ապագայ»-ում, այնպես էլ «Պայքար»-ում տպագրված հողվածների շարժանիթը Պոլսում հրատարակված գրական նյութերն էին, որոնք թվարկելուց բացի Չոպանյանը տալիս է նաև յուրաքանչյուրի ընդհանուր բնութագիրը: Սակայն մինչ այդ քննադատը կարևորում է խորհրդանշալի կրականության մեջ գրականության և ընդհանրապես մտավոր կյանքի նկատմամբ հատավարության կողմից ցուցաբերվող վերաբերմունքը, և

Չարենցի նոր ու ինքնատիպ պոեզիան, որ փաստորեն Տերյանից հետո մի նոր երևույթ ու որակ էր հայ քնարերգության պատմության մեջ, դեռ շատ կողմերով կարոտ էր գիտական բացատրության: Այս իմաստով է, ահա, ու նաև չարենցագիտության մեջ ունեցած առաջնորդության փաստով, որ Չարենցի մասին հողվածը, կարծում ենք, ունի շատ ավելի բարձր գրական-պատմական արժեք:

•• Մեկ ամիս անց այդ հողվածը արտատպվել է Կահիրեում լույս տեսնող «Արեւ»-ում (1924, թիվ 49, 50), որը Ռամկավար ազատական կուսակցության պաշտոնաթերթն էր: Մենք օգտվել և մեջբերումները կատարել ենք այստեղից, քանի որ «Պայքար» թերթի 296-րդ համարը պակասում է, որտեղ պետք է գետնիված լինէր հողվածի շարունակությունը:

••• Այդ հողվածը համարոտ, ակնարկային մի գրվածք է Տերյանի մասին, մի տեսակ նախորդող զուգակը «Պայքար»-ում տպագրված հողվածի, սակայն այնքան համեստ իր «քննադատական բաժնով», որ, թվում է, վերջինիս հապավումն է (Տե՛ս Ա. Չոպանեան, Վ. Տերեանի «Երկերի ժողովածուն» (թերթում սխալմամբ տպված է «Երկիրի ժողովածուն»), «Ապագայ», 1923, թիւ 1): Այդ հանգամանքը նկատի ունենալով է, որ «Պայքար»-ի հողվածը դիտում ենք Չոպանյանի միակ «ստվար» խոսքը բանաստեղծի մասին:

¹ Ա. Չոպանեան, Վ. Տերեանի «Երկերի ժողովածուն», «Արեւ», 1924, թիւ 49: Այս հողվածից քաղված մյուս մեջբերումները կնշենք տեքստում, կրճատ՝ Ա և թիվը:

ապա երկրի հայութեանը կոչ անում ամեն հնարավոր միջոցներով աջակցել ու նպաստել հայրենիքում ազգային մշակույթի ձևավորման և զարգացման համար ձեռնարկվող ջանքերին:

Չոպանյանը իր խոսքը Տերյանի մասին սկսում է ջերմ նախաբանով՝ նրա ստեղծագործության համար գուշակելով կայուն ու պատվավոր տեղ մեր գրականության մեջ. «Վահան Տերյանի երկասիրութեանց ժողովածուն պիտի մնայ իբր մեր գրականութեան անմահ յիշատակարաններէն, հայ մտքի հիմնական, դասական արտադրութիւններէն մին» (Ա, 49): Չոպանյանը Տերյանի հենց առաջին՝ «Մթնշաղի անուրջներ» ժողովածուի մեջ արդեն տեսնում է բանաստեղծի ինքնատիպության այն կարևոր հատկանիշները՝ «խորունկ ու փափուկ զգայնութիւնը», «նուրբ ու երանգատու ոճը», որոնք շատ արագ ապահովեցին նրա ինքնուրույն տեղը հայ բանաստեղծության «երկնքին մէջ», այնպիսի անունների կողքին, ինչպիսիք են Հովհ. Հովհաննիսյանը, Թումանյանն ու Խաճապետը, Մեծաբեկն ու Սիամանթոն, Վարուժանն ու Վահան Թեքեչյանը: Գրական ազդեցությունների մաստով Չոպանյանը Տերյանին կապված է տեսնում հատկապէս ֆրանսիական սիմվոլիստական գրականության հետ և այդ առնչությամբ նրան ավելի մոտ ու հարազատ համարում Մեծաբեկնին ու Թեքեչյանին, «որովհետև ինք այլ՝ ինչպէս այդ երկուքը, ազդուած է գլխատրապէս ֆրանսական սէմպոլիսթ շրջանի բանաստեղծութեան քանի մը լուսագոյն վարպետներէն»: Չոպանյանը չի խոսում այդ գրողների և Տերյանի արվեստի այլ կողմերի մասին, որոնք ևս նրանց մոտեցնում են իրար, ինչպէս, ասեմք, Ռույզի անկեղծությունը, պատկերների անսահման մեղմությունն ու նրբությունը: Սակայն նա ընդգծում է այն կարևորը, նկատում ընդհանրությունների այն առանցքը, որով պայմանավորված են բանաստեղծների գեղարվեստական մտածելակերպի առանձնահատկությունները, նրանց աշխարհընկալումն ու արտահայտման եղանակները: Սրանք հարցեր էին, որոնք հետագայում պետք է մանրամասնորեն վերլուծվեին գրականագիտության մեջ. գլխավորն այն է, որ Չոպանյանը մատնանշում է էականը:

Բննադատը գգում է Տերյանի թախիծն ու հուսահատ տխրությունը, այն ընկալում որպէս դաժան իրականության մեջ մարդկային ազնիվ հոգու լավագույն ձգտումների պարտությունից ծնված ողբերգության արտահայտություն: «Տխրություն» երգը՝ որպէս «հոգեխտով երագանքի և ամենանորբ երածշտութեան զմայլելի էջ մը», ժողովածուի «առաջին կտորն իսկ» լինելով, արդեն հաստատում է «բանաստեղծին բերած նոր, ինքնուրույն գեղեցկութեան ամբողջ չափը», նկատում է Չոպանյանը: Այն միաժամանակ արտացոլում է բանաստեղծի քնարական հերոսի՝ «կեանքի բիրտ զոհեկութիւններէն խոցուած, անուրջին լուսեղէն աշխարհին մէջ» իր սերն ու ողբը, վառ երագներն ու ծանր հուսախաբությունները նկարագրող ապրումները, որոնցով Չոպանյանը հյուսված է տեսնում շարքի և մյուս բոլոր «մելադաշնակ» տաղերը:

Խոսելով Տերյանի՝ 1912 թ. Մոսկվայում հրատարակած բանաստեղծական նոր տաղաշարքերի մասին («Գիշեր և հուշեր», «Ոսկի հեքիաթ», «Վերադարձ») քննադատը նկատում է տրամադրությունների այն նույն՝ անհատի տառապանքի և երագների հոգեբանական հզոր ընթացքը, ինչը դրսևորվում էր բանաստեղծի առաջին երգերի մեջ, որը, ուրեմն, բնութագրական է նաև վերջիններին: Նոր երգաշարերում, սակայն, անձնական ապրումների հետ միաժամանակ երևան են գալիս բանաստեղծի հասարակական մտահոգությունները, և նա հնչեցնում է իր ժողովրդի դժբախտ ճակատագրի թեման: «Հայրենիքում» տաղը բնութագրելով իբրև հեղինակի՝ իր ազատությունը կորցրած, «ճակատագրէն հալածուած իր ժառանգազուրկ ցեղին» անբախտության վրա բարձրացրած ողբերգ՝ Չոպանյանը հետագայում գրողի անցումը հեղափոխական տրամադրություններին տրամաբանորեն պայմանավորում է Տերյանի՝ իր մեռնող ժողովրդին կործանման եզրից փրկող հայրենասերի ազնիվ ձգտմամբ: Այսինքն, բացի անհատական բարոյական և հոգեբանական ընդգծված նախադրյալներից, նաև ազգային-քաղաքական ուրույն հանգամանքներն են բանաստեղծին ուղղակիորեն կապել հեղափոխական իրադարձությունների հետ, և նա «ազգային-ազատագրական պայքարի շահագրգռություններով» է նաև համակրել սոցիալիստական գաղափարների: Վերլուծելով «Արևածագ» և «Վերադարձ» բանաստեղծությունները՝ քննադատը հաստատում է իր այս միտքը և մեջբերումներ անում հիշյալ տա-

ղերից. «Արեւածագ և Վերադարձ» քերթումը ամբողջությամբ, բանաստեղծին մէջ կը յայտնեն յառնուր ընկերական վերանորոգիչ լեղաշրջութեան մը յուսին, յոյս որ զինքը կը խանդավառէ իր թախծագին լքմանց մէջ, լեճակէտ մը կը դառնայ իր զգումով, շուարած ու վհատ հոգիին, ու սիտիող տարտամ ու անմարմին երագներու տեղ՝ կը կանգնի պահ մը իր դէմ՝ իբրեւ կազդորիչ առնական տեսիլ մը երկրի վրայ արդարութեան անհրաժեշտ ու անխուսափելի մարմնացման,- գրում է Չոպանյանը: - Տէրեան յարած էր ռուս «սոցիալ-դեմոքրատ» լեղափոխական շարժման, կ'երգէ այդ շարժման յաղթանակին համար զոհուող «եղբայրները» և արդէն իր սրտին մէջ կը զգայ, կը տեսնէ «արշալոյսը» որ պիտի ծագի, ու կ' ուզէ ինք ալ՝ փոխանակ հասարակ անշարժ կեանքի ձանձրութեան մէջ դանդաղօրէն մաշելու՝ այդ արշալոյսին ծագմանը համար կոտիլ ու «հերոսի մը պէս մեռնի» (Ա. 49):

Նկատենք, որ Չարենցի հեղափոխական քերթողության բնութագրումների մեջ Չոպանյանը դարձյալ նույն միտքն է հաստատում, այն, որ գրողը «սոցիալիստական հեղափոխության ընդունման և բանաստեղծական դրվատման հանգել է ազգային ճակատագրի խոր վերապրման ճանապարհով»՝ հավատացած, որ իր աղետյալ ժողովրդի փրկությունը պետք է սպասել հեղափոխության հաղթանակից⁵. «Հոսանքի մը կրատրականապէս հետեւելու համար չէ որ ան (Ե. Չարենց - Վ. Ա.) յարած է ռուս լեղափոխական շարժման, օտարասիրական, նորասիրական հարեանցի ձգտում մը չէ ատիկա իր մէջ, իր հայր սիրտն է այնքան, որքան իր ազատամուլ, պայքարատենչ խառնուածքը, որ զինք մղած է այդ շարժման յարելու...»⁶:

Ասել է թե երկու գրողների հեղափոխական նվիրումի մեջ քննադատը տեսնում է նույն մղումը և նույն դիրքից է քննում ու մեկնաբանում նրանց հեղափոխական երգի ծննդյան պատմությունն ու խորհուրդը:

Հողվածի շարունակության մեջ Չոպանյանը ներկայացնում է Տերյանի հետագա բանաստեղծական շարքերը, անում ընդհանուր բնութագրումներ, կատարում մեջբերումներ: «Երկիր Նահրի» ժողովածուում տեսնում է հարազատ ժողովրդի անօրինակ չարչարանքները երգող բանաստեղծի մորմոքն ու կսկիծը, որտեղ տառապանքի ու ցավի ծանր զգացողություններից գալիս խառնվում է փրկության հաստատ հավատը զորացնող գրողի գերշնչանքը («Որքան մութը սև՝ այնքան ես համառ, Երկնի՛ր, իմ երկի՛ր, հավատով անմար, Սուրբ է քո ուղին և պսակըդ՝ վեհ...»): Իսկ ահա «Ոսկի շղթա», «Կատվի դրախտ», «Վերջին դաշնակ» շարքերի համար իբրև իրար կապող ընդհանուր գիծ Չոպանյանը նկատում է անձնական կյանքի թեման, անհատական երգի մոտիվը, որը հնչում է այս անգամ բանաստեղծի սեփական ճակատագրի ծանր զգացողությունից ավելի թանձրացած, սաստկացող հիվանդությունից ավելի «ցաւատանջ ու դառն»: Իսկ «Հրածեշտի գագեղը»՝ «հայ բանաստեղծութեան ամենէն յուզիչ ու գեղեցիկ» էջերից մեկը, օրինակվում է իբրև բանաստեղծի վիթխարի ցավի արտահայտություն: ...Չկա ոչ վերլուծական քննություն, ոչ բացատրություն: Չոպանյանը պարզապէս ներկայացնում է այդ ցավը. ամեն ինչին փոխարինում է Տերյան անհատի թախծոտ սրտի անկեղծ խոսքը: Սակայն Չոպանյանը զգացել է Տերյանին տանջող բաժանման ու հեռացման սարսափելի տրամադրությունները, ապրել բանաստեղծի տագնապը:

Չոպանյանին հետաքրքրել է հուզել է նաև Տերյանի մարդկային և քաղաքացիական նկարագիրը: Այն հանգամանքը, որ իր հողվածի շարունակության մեջ նա մի ծավալուն հատված է արտասպել Սիմեոն Հակոբյանի՝ բանաստեղծին նվիրված գրքի կենսագրական բաժնից, դրա խոսուն վկայությունն է: Իր այդ շարադրանքի մեջ Հակոբյանը Տերյանի մշակութային վաստակը գնահատելուց բացի անդրադառնում է նաև վերջինին կազմակերպած հասարակական աշխատանքներին, պատմում գրողի ազգային-քաղաքական գործունեության մասին, մեկնաբանություններ անում նրա քաղաքական աշխարհայացքի

⁴ Էդ. Ջրբաշյան, Արշակ Չոպանյանի հողվածը Երիշէ Չարենցի մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1977, № 3, էջ 135:

⁵ Չոպանյանի այդ դիտարկումը շատ լավ է մեկնաբանված Վ. Գաբրիելյանի «Արշակ Չոպանյանը սովետահայ գրականության մասին» աշխատության մեջ, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1989, № 1, էջ 38:

⁶ Ա. Չոպանյան, Երիշէ Չարենց, «Ապագայ», 1924, թիւ 17:

ձևավորման վերաբերյալ: Չոպանյանի նպատակը պարզ է. ցույց տալ բանաստեղծի կապը իր ժողովրդի ու նրա պատմության հետ, ընդգծել նրա հայրենաճակեր գործի նշանակությունը ժամանակակից հայության համար, ներկայացնել Տերյանի բարոյական ու քաղաքական կերպարի գեղեցկությունը:

Հողվածի վերջում Չոպանյանը մի ներքին գոհունակությամբ է խոսում է Պ. Մակինցյանի՝ Տերյանի անձի և գրական ժառանգության նկատմամբ ցուցաբերած հոգատարության և հետաքրքրության մասին, հաճույքով նկատում, որ «հմուտ ու նրբաձակ» քննադատ-հրատարակիչը շուտով պետք է տպագրի Տերյանի «Երկերի ժողովածուի» առաջին հատորը... մի բանաստեղծի, որը «մեզ շնորհեց իր գերանուրբ քնարերգութեան հմայքը»⁶:

В. В. АВАГЯН — Аршак Чопанян о Ваане Терьяне. — Одной из ярких страниц критического наследия Аршака Чопаняна является статья о В. Терьяне, в которой характеризуется и оценивается лирика, искусство поэта. Эта статья впервые была напечатана в издаваемой в Бостоне газете «Пайкар» и вплоть до сегодняшнего дня не удостоилась должного внимания со стороны армянского литературоведения. Анализируя эту статью, автор замечает некоторое сходство в постановке вопросов, в критериях оценки с другой известной статьей А. Чопаняна, посвященной Е. Чаренцу, и показывает смежность, близость двух этих статей не только по времени их создания, но и по подходам к материалу, по принципам критического анализа.

⁶ Ա. Չոպանեան, Գրոմիկ, «Անահիտ», 1934, թիւ 5-6, էջ 101: